Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 29 -ի N 1403 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՈՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԱՐՏԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԽԱՂՈՂԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՈՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Գինեգործական արտադրանքի մնացորդների, աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրելու նպատակով օգտագործված խաղողի և աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակների հայտարարագրման կարգի (այսուհետ՝ կարգ) գործողությունը տարածվում է գինեգործական արտադրանք արտադրող, գինեգործական արտադրանքի մնացորդների մեծածախ առևտրով զբաղվող, աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրող, ինչպես նաև դրանց մեծածախ առևտրով զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ) վրա:

2. Սույն կարգով սահմանվում են գինեգործական արտադրանքի մնացորդների, աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրելու նպատակով օգտագործված խաղողի և աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակների հայտարարագրերի (այսուհետ՝ հայտարարագիր) ձևերը, ներկայացնելու ժամկետները և լրացման կարգը:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Գինեգործական արտադրանք արտադրող տնտեսավարող սուբյեկտները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N1403-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 31-ը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունն (այսուհետ՝ լիազոր մարմին) են ներկայացնում իրենց կողմից տվյալ տարվա ընթացքում խաղողի վերամշակումից ստացված գինեգործական արտադրանքի մնացորդների՝ գինեխյութի և գինու նստվածքների (դիրտ), խաղողի պտղամաշկի, կորիզի, չանչի, կնճեռի և բարդայի քանակների վերաբերյալ հայտարարագիրը՝ համաձայն N 1 ձևի:

4. Գինեգործական արտադրանքի մնացորդների մեծածախ առևտրով զբաղվող տնտեսավարող սուբյեկտները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N1403-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 31-ը, լիազոր մարմին են ներկայացնում իրենց կողմից տվյալ տարվա ընթացքում գնված և իրացված գինեգործական արտադրանքի մնացորդների քանակների վերաբերյալ հայտարարագիրը՝ համաձայն N 2 ձևի:

5. Աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրող տնտեսա-վարող սուբյեկտները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N1403-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 31-ը, լիազոր մարմին են ներկայացնում աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի և դրա արտադրության նպատակով արտադրված և(կամ) գնված խաղողի քանակների վերաբերյալ հայտարարագիրը՝ համաձայն N 3 ձևի:

6. Աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի մեծածախ առևտրով զբաղվող տնտեսավարող սուբյեկտները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N1403-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև

յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 31-ը, լիազոր մարմին են ներկայացնում իրենց կողմից տվյալ տարվա ընթացքում գնված, պահեստավորված և իրացված աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակների վերաբերյալ հայտարարագիրը՝ համաձայն N 4 ձևի:

7. Գինեգործական արտադրանք արտադրող և գինեգործական արտադրանքի մնացորդների մեծածախ առևտրով զբաղվող տնտեսավարող սուբյեկտները սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված ընթացակարգով լիազոր մարմին են ներկայացնում հայտարարագիր՝ համաձայն N N 1 և 2 ձևերի, իսկ աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրող և դրանց մեծածախ առևտրով զբաղվող տնտեսավարող սուբյեկտները սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված ընթացակարգով լիազոր մարմին են ներկայացնում հայտարարագիր՝ համաձայն N N 3 և 4 ձևերի:

8. Աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակները հայտարարագրվում են՝ հաշվի չառնելով դրանց տվյալ տարվա, թե նախորդ տարիների բերքից արտադրված լինելու հանգամանքը:

9. Հայտարարագրերից մեկը պահվում է տնտեսավարող սուբյեկտի մոտ, իսկ մյուսը հանձնվում լիազոր մարմին:

10. Լիազոր մարմինն ապահովում է հայտարարագրերում ներառված՝ առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության գաղտնիությունը:

11. Հայտարարագրերը լիազոր մարմին կարող են ներկայացվել անձամբ՝ լիազոր մարմին հանձնելու, փոստային նամակի, ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

III. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Հայտարարագրերում գրանցումները կատարվում են հայերենով՝ հաշվողական (համակարգչային) տեխնիկայի միջոցով: Հայտը սխալ լրացնելու դեպքում լրացվում է նորը:

13. Անհատ ձեռներեցի տվյալները, անձնագրի սերիան և համարը լրացվում են անձնագրի բնօրինակի տվյալներին համապատասխան:

14. Հասցեները, պայմանագրային և խաղողի ծագման վայրի վերաբերյալ տվյալները լրացվում են այնպիսի մանրամասնությամբ, որ ապահովվի դրանց ճշգրիտ նույնականացումը:

15. Թվային ցուցանիշները լրացվում են թվի տասներորդական մասի ճշտությամբ:

16. Հայտարարագրերի չլրացվող սյունակի տողում դրվում է հորիզոնական գծիկ:

17. Հայտարարագիրն ստորագրվում է իրավաբանական անձի պատասխանատու պաշտոնատար անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նրանց կողմից լիազորված անձի (այսուհետ՝ հայտարարատու) կողմից և վավերացվում տնտեսավարող սուբյեկտի կնիքով (կնիքի առկայության դեպքում):

18. Եթե հայտարարագիրը բաղկացած է մեկից ավելի էջերից, ապա յուրաքանչյուր էջի վերջում դրվում է հայտարարատուի ստորագրությունը:

19. Արտադրության ընթացքում ստացված (անջատված) մնացորդների քանակների վերաբերյալ տվյալները լրացվում են դրանց ստացման (անջատման) պահի դրությամբ ունեցած փաստացի խոնավության հաշվարկով:

20. Մնացորդների պահման ընթացքում ստացված կորուստների քանակների վերաբերյալ տվյալները լրացվում են ըստ տվյալ տնտեսավարող սուբյեկտի կողմից մշակված և հաստատված կորուստների չափերի:

21. Արտադրված, պահեստավորված, գնված և իրացված աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակների վերաբերյալ տվյալները լրացվում են ըստ դրանց տեսակների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽԱՂՈՂԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ

Ներկայացվում է համաձայն <<Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29–ի <<Գինեգործական արտադրանքի մնացորդների, աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրելու նպատակով օգտագործված խաղողի և աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակների հայտարարագրման կարգը սահմանելու մասին>> N 1403 –Ն որոշմամբ սահմանված կարգի:	
Ով է ներկայացնում _____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը կամ անունը) Մարզը _____ Գտնվելու վայրը (գործունեության իրականացման վայրի հասցեն) _____ Էլեկտրոնային փոստի հասցեն _____ հեռ./ֆաքս _____	ներկայացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնում են գինեգործական արտադրանք արտադրող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը հայտարարագիրը ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը

Վերամշակված խաղողի քանակը (կգ)	Արտադրության ընթացքում ստացված մնացորդները					Պահման ընթացքում առաջացած կորուստները	
	գինեկոյության և գինու նստվածքներ (դիրտ)			խաղողի պտղամաշկ, կորիզ և չանչ (կգ)	խաղողի կնճեռ և բարդա (կգ)	գինեկոյության և գինու նստվածքներ (դիրտ) (դալ)	խաղողի պտղա-մաշկ, կորիզ, չանչ, կնճեռ և բարդա (կգ)
	քանակը (դալ)	էթիլ սպիրտի միջին ծավալային մասը (%)	շաքարների միջին զանգվածային խտությունը (գ/դմ^3)				
1	2	3	4	5	6	7	8

Հայտարարագրողի _____
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ամսաթիվը _____

Ձև N 2

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

ԳՆՎԱԾ ԵՎ ԻՐԱՑՎԱԾ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ

Ներկայացվում է համաձայն <<Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի <<Գինեգործական արտադրանքի մնացորդների, աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրելու նպատակով օգտագործված խաղողի և աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակների հայտարարագրման կարգը սահմանելու մասին>> N1403-Ն որոշմամբ սահմանված կարգի:

Ով է ներկայացնում _____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը կամ անունը) Մարզը _____ Գտնվելու վայրը (գործունեության իրականացման վայրի հասցեն) _____ Էլեկտրոնային փոստի հասցեն _____ հեռ./ֆաքս _____	ներկայացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնում են գինեգործական արտադրանք արտադրող և գինեգործական արտադրանքի մնացորդների մեծածախ առուվաճառքով զբաղվող իրավաբանական ու ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը հայտարարագիրը ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը

Մնացորդները 201 թ. հունվարի 1-ի դրությամբ					Հաշվետու ժամանակաշրջանում գնվել է				
գինենյութի և գինու նստվածքներ (դիրտ)			խաղողի պտղամաշկ, կորիզ և չանչ (կգ)	խաղողի կնճեռ և բարդա (կգ)	գինենյութի և գինու նստվածքներ (դիրտ)			խաղողի պտղամաշկ, կորիզ և չանչ (կգ)	խաղողի կնճեռ և բարդա (կգ)
քանակը (դալ)	էթիլ սպիրտի միջին ծավալային մասը (%)	շաքարների միջին զանգվածային խտությունը (գ/դմ³)			քանակը (դալ)	էթիլ սպիրտի միջին ծավալային մասը (%)	շաքարների միջին զանգվածային խտությունը (գ/դմ³)		
1	2	3	4	5	6	7	8	9	10

Հաշվետու ժամանակաշրջանում իրացվել է					Պահման ընթացքում առաջացած կորուստները		Մնացորդները 201 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Գինենյութի և գինու նստվածքներ (դիրտ)			խաղողի պտղա-մաշկ, կորիզ և չանչ (կգ)	խաղողի կնճեռ և բարդա (կգ)	գինենյութի և գինու նստվածքներ (դիրտ) (դալ)	խաղողի պտղամաշկ, կորիզ, չանչ, կնճեռ և բարդա (կգ)	գինենյութի և գինու նստվածքներ (դիրտ)			խաղողի պտղա-մաշկ, կորիզ և չանչ (կգ)	խաղողի կնճեռ և բարդա (կգ)
քանակը (դալ)	էթիլ սպիրտի միջին ծավա-լային մասը (%)	շաքարների միջին զանգվածային խտությունը (գ/դմ³)					քանակը (դալ)	էթիլ սպիրտի միջին ծավա-լային մասը (%)	շաքարների միջին զանգվածային խտությունը (գ/դմ³)		
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22

Հայտարարագրողի _____
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ամսաթիվը _____

Ձև N 3

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՈՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԴՐՎԱԾ ԵՎ (ԿԱՄ) ԳՆՎԱԾ ԽԱՂՈՂԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ

Ներկայացվում է համաձայն <<Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի և ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի <<Գինեգործական արտադրանքի մնացորդների, աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրելու նպատակով օգտագործված խաղողի և աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակների հայտարարագրման կարգը սահմանելու մասին>> N1403 –Ն որոշմամբ սահմանված կարգի:

Ով է ներկայացնում _____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը կամ անունը) Մարզը _____ Գտնվելու վայրը (գործունեության իրականացման վայրի հասցեն) _____ Էլեկտրոնային փոստի հասցեն _____ հեռ./ֆաքս _____	ներկայացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնում են աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը հայտարարագիրը ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը

Խաղողի սորտը և գույնը	Օգտագործված խաղողի ընդհանուր քանակությունը, այդ թվում՝				Արտադրված աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքը (դալ)										
	գնված		սեփական արտադրության		քաղցու, գինենյութ, գինի		այդ թվում՝						օղու թորվածք, ընդամենը	օղի	
							սպիտակ		վարդագույն		կարմիր				
	քանակը (կգ)	պայմանագրի համարը, ծագման վայրը	քանակը (կգ)	ծագման վայրը	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված		ընդամենը	որից՝ շշալցված
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ընդամենը															
այդ թվում 1															
2															
3															
....															

Հայտարարագրողի _____
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ամսաթիվը _____

Ձև N 4

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

ԳՆՎԱԾ, ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԻՐԱՑՎԱԾ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՈՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՔԱՆԱԿՆԵՐԻ

Ներկայացվում է համաձայն <<Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի <<Գինեգործական արտադրանքի մնացորդների, աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրելու նպատակով օգտագործված խաղողի և աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանքի քանակների հայտարարագրման կարգը սահմանելու մասին>> N1403–Ն որոշմամբ սահմանված կարգի:

Ով է ներկայացնում _____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը կամ անունը) Մարզը _____ Գտնվելու վայրը (գործունեության իրականացման վայրի հասցեն) _____ Էլեկտրոնային փոստի հասցեն _____ հեռ./ֆաքս _____	ներկայացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնում են աշխարհագրական նշումով գինեգործական արտադրանք արտադրող և մեծածախ առուվաճառքով զբաղվող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը հայտարարագիրը ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը

Մնացորդները 201 թ.հունվարի 1-ի դրությամբ (դալ)											Հաշվետու ժամանակաշրջանում գնվել է (դալ)										
քաղցու, գինենյութ, գինի		այդ թվում՝						օղու թորվածք, ընդամենը	օղի		քաղցու, գինենյութ, գինի		այդ թվում՝						օղու թորվածք, ընդամենը	օղի	
		սպիտակ		վարդագույն		կարմիր							սպիտակ		վարդագույն		կարմիր				
ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված		ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված		ընդամենը	որից՝ շշալցված
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
այդ թվում՝ 1. 2. 3. . .																					

Հաշվետու ժամանակաշրջանում իրացվել է (դալ)											Մնացորդները 201 թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ (դալ)										
քաղցու, գինենյութ, գինի		այդ թվում						օղու թորվածք, ընդամենը	օղի		քաղցու, գինենյութ, գինի		այդ թվում						օղու թորվածք, ընդամենը	օղի	
		սպիտակ		վարդագույն		կարմիր							սպիտակ		վարդագույն		կարմիր				
ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված		ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված	ընդամենը	որից՝ շշալցված		ընդամենը	որից՝ շշալցված
23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44
այդ թվում 1. 2. 3. . .																					

Հայտարարագրողի ____

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ամսաթիվը __________